

տարականոն գրուածքներ (օր. Ենովքի Գիրքը, Կու-
ֆայէ՝ կամ այսպէս կոչուած յորեւեանների
գիրքը) և մի ժողովածու եկեղեցական կանոնների, Սա-
կայն թէև միւս եկեղեցիների մէջ նման հաշիւ չենք
գտնում, բայց նոյն իսկ 81 զբքերի զանազան կերպ
հաշուելը ցոյց է տալիս, որ այդ թիւը միշտ հաս-
տատուն չէ եղել և գուցէ ուրիշ տեղից է մուտք
գործել:

Յամենայն դէպս անիրաւացի է հարեշական ե-
կեղեցու մի խոտելի առանձնայատկութիւն համա-
րել նաև այն, որ իբր թէ նա կրկնակրտութիւն է
ընդունում: Մկրտութեան տօնը, որ պատճառ է
եղել այս թիւերիմացութեան, նման ձևով տօնուում
է նաև Ղպտիների և Յակորբիների մէջ և համա-
պատասխան է օրթոդոքս եկեղեցու կատարած
«Չրօրհնաց» հանդիսին:



ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆԸ:

Սկսած այն ժամանակից, երբ մատե-
րիալիզմը (նիւթապաշտութիւնը), մանաւանդ
անգլօֆրանսիական պոզիտիվիզմի (զրական
փիլիսոփայութեան) կերպարանքով հասարա-
կութեան աւելի և աւելի հեռաւոր խաւերի
մէջ մուտք է գործում՝ Գերմանիայում երբեք
պակաս չեն եղել այս աշխարհայեցողութեան
դէմ բողոքող ձայներ: Թէ ընդհանրապէս գի-
տութեան և թէ մասնաւորապէս կրօնի ա-
նունով: Զարմանալի չէր սակայն, որ այդպէս
լինէր Գերմանիայում զաղափարականութեան
հին հայրենիքում: աւելի հետաքրքիրն այն է,
որ Ֆրանսիայում՝ ԺԸ, դարու չորսակաների Ղե-
մարիները՝ մատերիալիզմի ու Էնցիկլոպիդիստ-
ների և ԺԹ, դարու պոզիտիվիզմի հայրենի-
քում առաջնակարգ գործիչներ վկայում են
այժմ և ողջունում զաղափարականութեան
հետզհետէ վերակենդանանալը: Խօսքը նո-
րութիւնների ետեւից ընկած մի սովորական հե-
ղինակի մասին չէ, այլ ակադեմիայի անդամ
Բրունըրիերի մասին, որ արդէն իւր Բոսսուէ-
տի վրայ կարգացած դասախօսութիւններով
և վճռէրով ոգևորողների նկատմամբ բռնած
դիրքով ցոյց էր տուել, թէ ինչպէս խաղաղ
գիտէ գիտել ժամանակի զարգացումը և անու-

շաղիւր թողնել օրուայ հերոսների աղաղակը:
Իւր նորերս լոյս տեսած *La Renaissance de
L'idéalisme* (Պաղափարականութեան վերածը-
նութիւնը) գրքի մէջ Բրունըրիեր պնդում է,
որ վերջին տարիներում իշխող մատերիալիզ-
մին զուգընթաց և իբրեւ մի դանդաղ հակա-
ռակ հոսանք՝ կարելի է գաղափարականութեան
կրկին արթնանալը նկատել, և այն ոչ միայն
գիտութեան, այլ նաև արուեստի և գրականու-
թեան, մինչև իսկ քաղաքականութեան շրջա-
նում:

Բրունըրիեր ներկայացնում է այդ գաղա-
փարականութիւնը գիտութեան մէջ իբրեւ
դատութիւն իրողութիւնների այն բանութիւ-
նից, որոնք ամեն ժամանակուայ մատերիալիզ-
մի, ինչպէս նաև այժմ անցրած պոզիտիվիզ-
մի տեսակէտով միակ ճշմարիտն են: Հակառակ
պոզիտիվիզմի, որի համար ամեն չհաշուած,
չկշռուած, չչափուած, զգայութիւնների ներ-
քոյ չընկնող ինչ ենթադրական է և խաբուսիկ,
զաղափարականութեան ներկայ վերածնութիւ-
նը յառաջ է բերում հետզհետէ այն համո-
զումը, թէ իրողութիւններն իրենք իրենց
բացատրել չեն կարող, այլ աւելի բարձր և նա-
խընթաց մի բան են պահանջում և թէ աշ-
խարհքում բաներ կան, որոնք երբեք մեր
զգայութիւններին չեն ենթարկուի և ըմբռնե-
լի չեն լինի: Թէ ուրեմն «այն վարագուրի ե-
տեւ» որի առաջ պատմութեան ու բնութեան
թատերգութիւնն է տեղի ունենում մի ան-
տեսանելի պատճառ, խորհրդաւոր հեղինակի
Deus absconditus (անծանօթ Աստուած) կայ
ծածկուած: Մինչև իսկ այն մեթոդը, որի
միջոցաւ գիտութիւնը նոր հայեացքներ և նոր
ասպարէզներ է ձեռք բերել, հիմնուած է զա-
ղափարականութեան վերայ, քանի որ զաղա-
փարն է գիտնական հետազօտութեան մայ-
րը, և նոր ժամանակի գիտնականները՝ «կեան-
քի գիտութեան» նորագոյները, Կլօդ Բերնարդ
Դարվին, Պաստէօր, ոչ թէ երկարատեւ գիտո-
ղութեամբ կամ փորձերի ճշգրտութեամբ են
գործ կատարել, այլ համարձակ զաղափարնե-
րով և ծոխ տեսութիւններով: Լոկ իրողու-

թիւնները նոցա բաւականութիւն չէին տալիս ուստի տեսութիւնների օգնութեանն էին դիմում: որ ուրիշ ոչինչ է եթէ ոչ պարզապարի գերակշռութիւնը իրողութիւնների դէմ: Հարկաւ առանց մոռանալու Նիւտոնի վարածանօթ խօսքը. Hypotheses non fingo (Տեսութիւնները չեմ հնարում): Եթէ գիտութիւնը պարտաւոր է իւր գիտնականների խոստումները կատարելու և յիշաւի է—այն ժամանակ նա սնանկ հրատարակուած պէտք է համարուի որովհետեւ իւր պարտքի 75, 50 կամ 25 տոկոսն է միայն վճարել: Դեկարտը, Կոնդորսէն և դեռ Ռընան (իւր Avenir de la science—Գիտութեան ապագան՝ գրուածքով) խոստացել են պատասխան այն հարցին, թէ ուր ենք մենք գնում ինչ ենք, որտեղից ենք գալիս: Սակայն այդ պատասխանը դեռ այսօրուայ յաղթական գիտութիւնն էլ չէ տուել, կամ տուածն է մի ժխտական Ignoramus, ignorabimus (չգիտենք և չենք իմանայ): Այս ճանաչողութիւնը և այս խոստովանութիւնը, թէ բնութեան մէջ կայ մի բան, որ բարձր է նորանից և ենթակայ չէ զգայութեանց, որ կան կենսական ինքիւններ անլուծելի բնագիտութեան և բնալուծութեան, բնական պատմութեան և լեզուագիտութեան համար՝ սկիզբն է գաղափարականութեան վերածնութեան, որին հետեւում է նաև այն, երկար ժամանակ է լի վեր մերժուած, խոստովանութիւնը, թէ փիլիսոփայութիւն, գեղարանութիւն (էսթետիկա), բարոյագիտութիւն և բնազանցութիւն նոյնպէս գիտութիւններ են: Պողիտիվիզմը անուշադիր էր թողել մարդոց մի շարք էական պահանջները. «մենք կարող ենք շատ գեղեցիկ ապրել, առանց լուսնի վրայի լեռների և եթերի յատկութիւնների մասին գաղափար ունենալու. բայց ոչ առանց երեւակայութեան և սրտի առաջարկած այն հարցերի, որոնց պատասխանը գիտութիւնն ու խելքը տալ չեն կարող: Արդէն իսկ սպիրիտիզմի (հոգեխօսութեան), միզակննութեան, նոր ընդդայակաւնութեան, նոր քրիստոնէութեան ժամանակակից շարժումներն ապացոյց են, որ մենք այդ

հարցերը ջնջելու կարողութիւն և ցանկութիւն չունինք: Նոքա արտայայտութիւն են հոգու մի ներքին բողբոխ իրողութիւնների կոպիտ իշխանութեան դէմ: Բրունըտիէր այդ պատճառով պողիտիվիզմի մասին խօսում է, իբրև մի անցկեցած աշխարհայեցողութեան մասին:

Միևնոյն հակումները նկատուում են նաև արուեստի ու գրականութեան մէջ: Այդպէս է ահա օր. երաժշտութեան նկատմամբ, որ ինչպէս ամենավսեմ տպաւորութիւն անել, այնպէս և ամենաստորացուցիչ, զգայական կերպով ազդել կարող է. և մինչդեռ Նիտչէն հէնց այս վերջին կողմով մեղադրում է այժմեան երաժշտութիւնը, այսինքն Վաղներին՝ Բրունըտիէրի կարծիքով ընդհակառակն վաղներականութեան գլխաւոր ներգործութիւններից՝ մէկն էլ այն է, որ երաժշտութեան այդ զգայական հիմքի վերայ աւելի մտաւորը, գաղափարականը, այսպէս ասած բնազանցականն է բարձրացնում և փայլեցնում: Վաղների երաժշտական վերանորոգութեան խոր գաղափարական բնաւորութիւնը յեղափոխութիւն չէ երաժշտական աշխարհում, նեղ մտքով առած, այլ առհասարակ արուեստի մի նոր ըմբռնումն՝ նորանով, որ նա երաժշտութիւնն ու բանաստեղծութիւնը աւելի սերտ կերպիւ իրար հետ կապեց ու ձուլեց, և դարձրեց երաժշտութիւնը արտայայտութիւն ամենախոր և միանգամայն ամենաընդհանուր զգացմունքների, որոնց համար բանաստեղծութեան սահմանները նեղ են: Այս գիտակցութիւնը, որ Բրունըտիէր գաղափարականութեան յաղթանակ է համարում ամբողջ Եւրոպայում կապուած է այն հանգամանքի հետ, որ Ֆրանսիան վերջին ժամանակներս միայն նուաժուեցաւ Վաղների առաջ:

Բրունըտիէր կապում է վաղներականութիւնը նաև սիմբոլիզմի (նշանաբանութեան) հետ, որ գրականութեան մէջ կրկին իւր տեղն է գրաւել: Նա ցոյց է տալիս նատուրալիզմից (բնականութիւն), ինչպէս կոչուում է մատերեալիզմը գրականութիւն մէջ, դէպի սիմբո-

լիզմ և զաղափարականութիւն տեղի ունեցած զարգացումը Աղեքսանդր Դիւմա Ռուս գրողներով Սա, որի առաջնայ գրութեան մէջ ունեցած հայեացքները ամենքին յայտնի են, գրում է իւր վերջին գործերի յառաջաբանում ի միջի այլոց հետեւեալը. «Թատրոնը նպատակ չէ, այլ միայն միջոց: Բարոյական մարդը պատրաստ է, հասարականը պէտք է գեռ կրթել: Բանանք ուրեմն այգալիսի օգտակար թատրոն, կատակերգութեամբ լինի այդ թէ ողբերգութեամբ ևլն: Մի գրականութիւն որ կատարեալը բարոյականը, զաղափարականը, մի խօսքով օգտակարը՝ չունի ի նկատի, անպէտք և վնասակար գրականութիւն է: Իրողութիւններ և մարդիկ պարզ կերպով վերարտադրելը գրագիրների և լուսանկարների աշխատանք է միայն»:

Մինչև իսկ Զոլայի մօտ, առաւել Լուրդի մէջ, կարելի է մի այսպիսի հոսանք նշմարել, ինչպէս և գերմանական և հիւսիսային ազգերի գրականութեանց նման երևոյթների մէջ: Բանի որ այս զարգացումը նատուրալիզմից դէպի զաղափարականութիւն աւելի դանդաղ է ընթանում քան մեր դարու առաջին կիսում ըմբանտիկից դէպի նատուրալիզմ եղած զարգացումը: Բրունետիէր համարձակում է յուսալու, որ հետեւանքներն էլ աւելի հաստատուն պէտք է լինեն:

Նկարչութեան մէջ փառարանուած առաջնորդը Պուվի դը Շափանէսն է այժմ, որի հսկայական նկարը նաև Բերլինի վերջին գեղահանդիսում ուշադրութիւն գրաւեց: Եորա ամենամեծ գործերը այլաբանութիւններն են, ուրեմն այնպիսի աշխատութիւններ, ուր զաղափարն է պատճառ ու նպատակ, և ոչ բնութեան ճշգրիտ ընդօրինակութիւնը: Ինչ որ Բրունետիէր վազների մասին է ասում թէ նա զաղափարական տարրը իւր արուեստի շրջանում զգայականից անջատեց, նոյնը պնդում է նաև Պուվի դը Շափանէսի մասին: Սա չէ ստիպել ձեւերին և զոյններին խօսելու մի լեզուով, որի այբուբենը նոքա չունին, ստեղծուած չէ որոնելու առեղծուած կապոյտի կամ մի

զաղտնիք կարմրի մէջ. այլ այդ տարրերը, որ յաճախ մեզ համար չափազանց նիւթական են, նա հոգիացրել է և այդպէս նկարչութիւնը բանաստեղծական դարձրել: Եորա պատկերների մէջ փիլիսոփայութիւն կայ, ինչպէս երբեմն Նիկոլայ Պուստէնի համար էին ասում: Եոյն զաղափարականութեան սկզբունքն է դեր խաղում այստեղ, այսինքն այն համոզումը, թէ բնութեան ընդօրինակութիւնը նկարչութեան նպատակ լինել չէ կարող և թէ առարկաները, որոնց իսկականի վերայ մենք չենք հիանում, հիացքի արժանի դարձնողը, ինչպէս Պասկալն ասում էր, արուեստագիտի զաղափարն է, որ նոցա մէջը դնում է ինչ որ թագուն, ներքին, գերազոյն բան՝ անմատչելի ամբօխի աչքի համար:

Հետաքրքիրն այն է, որ Բրունետիէր քաղաքականութեան մէջ ևս մի այսպիսի վերածընթեան նշաններ է տեսնում: Մի դժկամակ հայեացք ձգելով Ֆրանսիական խորհրդարանների, այդ հակակղերական հոստեաց վերայ, նա դառնում է դէպի համայնական (սոցիալական) շարժումը, որն ընդունում է իբրև զաղափարականութեան յառաջ մղող: Եա ցաւում է, որ համայնական լինել չէ կարող, այդ անուան այնչափ ի չարը գործադրուելուն համար. մի անուն, որ հնարուած է եսականութեան հակադիր և ընկերականութեան հոմանիշ լինելու, բայց այժմ փոխուել, աւելի նշանակում է ատելութիւն և թշուառ նախանձ: Համայնականութեան (սոցիալիզմի) իսկական ոյժը, որ միայն այն ժամանակ յաղթել կարող ենք, երբ հաւասարը հանդէպը դնենք՝ զաղափարականութիւն լինելն է: Եա ապացոյցներ է մէջ բերում Լիբնիստից, առանց աչքից փախցնելու սոցա ճոռմաբան կողմը. «Մենք ունինք այն, ինչ որ կրօնի զօրութիւնն է կաղմում» հաւատ արդարութեան և զաղափարի յաղթութեան վրայ, այն հաստատ համոզումը, թէ իրաւունքը պէտք է յաղթէ և անարդարութիւնը վախճան ունենայ: Բրունետիէրի կարծիքով արդարութիւնը պահանջում է ասել, թէ հա-

մայնականները ամբողջի կրքերը իրրեւ զրգռել միջոց գործ չեն դնում (?) և ոչ իսկ նորա իսկական շահերը այլ նախ և ամենուրեք դադարներու լինին այդ ուղիղ թէ սխալ արդար թէ վտանգաւոր: Այդ է և պատճառը որ նորա ներկայացուցիչներին մեղադրում են «իրեւ դադարականներին որոնց պակասում է հասկացողութիւն իրականութեան մասին» բայց և որ ստիպուած են այն արժանիքը խոստովանել թէ «համայնականութեան բարոյականը հակառակորդների ունեցածից բարձր է»: Այն ինչ որ համայնականութեան մէջ ամեն քննադատութեան դիմանում է՝ դադարական է: Այս կողմից նայած համայնականութիւնը որի ամենամեծ թշնամին անհատականութիւնն է (ինդիվիդուալիզմը) եսի պաշտօնը կամ հետեւարար եսականութիւնը՝ զրկեալ բաղմութեան երեւակայութեան մէջ ներկայանում է ոչ իրրեւ երկրիս վերայ իրականանալու ուղղուելու, այլ բարձրացումն դէպի մի իղէալ: Իսկ դորան յաղթել կարելի է միայն մի բարոյապէս աւելի բարձր իղէալով և դորա համար առաջին քայլն է ընդունել որ համայնականութիւնը աւելի բան է բովանդակում քան միայն շահերի զրգռումն:

«Գաղափարականներ լինենք» բացականչում է վերջապէս Բրունըտիէր ընդունելով այդ գաղափարականութիւնը իրրեւ անհրաժեշտ հետեւանք այժմեան մտաւոր զարգացման. «Ժամանակն է գաղափարական լինելու» ուրիշ խօսքով ամեն ինչ իւր ժամանակն ունի նիւթապաշտութիւնն էլ իւր ժամանակն ունէր և գուցէ կրկին պէտք է ունենայ. իսկ այժմ պէտք է գաղափարական լինել ինչպէս անցեալում ենք ժամանակի բարձրութեան վերայ կանգնած լինել: Այդպիսով Բրունըտիէրի զրուածքը չնայած իւր չափաւոր և հանգիստ բնաւորութեանը՝ ազատ չէ մնում ֆրանսիական նորասիրութիւնից որին այնպէս հեշտութեամբ ենթարկուում են ֆրանսիայում ամենախոր և լուրջ շարժումներն անգամ: Նա ինքը գիտակից է իւր այս թուլութեան սակայն նա գրի է առել բնականաբար իւր նկատողու-

թիւնները ոչ քրիստոնէութիւնն ու իւր կարիքները աչքի առաջ առնելով և ոչ իսկ կրօնը որի օգտին պէտք է ծառայէ ըստ ինքեան գաղափարականութեան զարգացումը, այլ միայն իրրեւ մի սուր դիտող, որ զօրապետի հայեացքով զիտէ չափել և մեկնել իրերի ընթացքն իւր ամենաթիւթեւ շարժումներով: Մինչդեռ Բրունըտիէր զրեւ է ամենից առաջ ֆրանսիացի համար՝ եթէ մենք աւելի ընդարձակ տարածենք մեր հայեացքը, հեշտութեամբ վերածնութեան ուրիշ նշաններ կգտնենք: Ոչ միայն քրիստոնէական շրջաններում գաղափարականութիւն է պահանջուում և ցոյց տոււում իրրեւ մի աշխարհայեցողութիւն, որ թէ և դեռ կրօն չէ, բայց «կրօնի համար ազատ չինելու ասպարէզ է բանում» (Տրէնտէ), այլ նաեւ փիլիսոփաների մօտ բարձրանում է գաղափարականութեան յարգը և իրրեւ ապագայի կրօն հռչակուում: Դորա հետ է կապուած անշուշտ այն հանգամանքը որ Թոմաս Կարլայլ բոլոր ժամանակների համար ամենամեծ գաղափարականներից մէկը Գերմանիայում վերջին տարիներս այնպիսի մի գնահատութեան է արժանանում և այնպիսի շարժում յառաջ բերում որի հետեւանքը զժուար է որոշել: Բայց Անգլիայում ևս որ պողիտիվիզմի երկրորդ հայրենիքն էր դարձել յայտնի քարոզուում է մանաւանդ զրականութեան մէջ, որ պողիտիվիզմը երբեք չէ կարող զոհացումն տալ մարդկութեան և որ մարդոց վերայ ամենազօրեղ ներգործութիւն ունեցող գաղափարականութիւնն է: Եւ ամենայն դէպս մենք իրաւունք ունինք յուսալու որ ինչպէս նախորդ (ԺԾ. դարու) վերածնութիւնը քրիստոնէութեան համար որոշ չափով հեթանոսութիւն յետ բերաւ այս նոր վերածնութիւնը այժմեան հեթանոսացած աշխարհի համար քրիստոնէական բարիքներ յետ կրերէ: *

* Թարգմ. Christliche Welt Թերթից. 1896. № 27. Հեղինակն է Կեյլեր: